Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 342 - Ա
որոշման

«ԴԵՊԻ ՀԱՅՔ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Զարգացնել և ամրապնդել 18-32 տարեկան սփյուռքահայ երիտասարդների կապը հայրենիքի հետ՝ նրանց ներգրավելով կամավորական աշխատանքների մեջ՝ հնարավորություն տալով նրանց մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ հայրենիքի զարգացման գործում, միաժամանակ երկարատև անձնական կապեր ստեղծել հայրենիքում և բարձրացնել Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը: Համայնքային զարգացման ծրագիրը աջակցում է համայնքապատկան կառույցների վերանորոգման աշխատանքներին: Ծրագրի շրջանակում առաջնահերթությունը տրվում է գյուղական համայնքներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Ջերսի 07753, 4000 Ստեյտ Ռուտ 66, Տինտոն ֆոլզ, 4-րդ հարկ)
4.	Ծրագիրը կատարողը	«Բըրթրայթ Արմենիա, Ինք.-ի Դեպի Հայք հայաստանյան մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանում, (քաղաք Երևան 0010, Հանրապետության 37, ՀՎՀՀ՝ 02938189)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	1,227,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արտերկրից Հայաստան ժամանած սփյուռքահայ երիտասարդները, ովքեր նաև ներգրավվում են կամավորական աշխատանքների մեջ Հայաստանի Հանրապետության կրթական, հասարակական և բարեգործական կազմակերպություններում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունիսի 6-ից մինչև 2031 թվականի ապրիլի 30-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) արտերկրից Հայաստան ժամանած սփյուռքահայ երիտասարդների Դեպի Հայք ծրագրին մասնակցության պայմանների ապահովում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 6-ից մինչև 2031 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 156,500,000 դրամի չափով (տարեկան՝ 31,300,000 դրամ). 2) արտերկրից Հայաստան ժամանած սփյուռքահայ երիտասարդներին ապրելավարձի, դեպի Հայաստան և հետադարձ միջազգային ուղևորափոխադրման, կացության գումարի տրամադրում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 6-ից մինչև 2031 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 440,000,000 դրամի չափով (տարեկան՝ 88,000,000 դրամ). 3) արտերկրից Հայաստան ժամանած սփյուռքահայ երիտասարդների համար պատմամշակութային վայրերի այցելության և հայոց լեզվի ուսուցման դասընթացների կազմակերպում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 6-ից մինչև 2031 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 540,500,000 դրամի չափով (տարեկան՝ 108,100,000 դրամ). 4) հանրային տարածքների և հաստատությունների բարեկարգում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 6-ից մինչև 2031 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 90,000,000 դրամի չափով (տարեկան՝ 18,000,000 դրամ):
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) էքսկուրսիաների, պատմամշակութային վայրերի այցելության և ուղևորափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 238,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 2) շապիկների, պայուսակների և հուդիների ձեռքբերում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 3) հայոց լեզվի դասընթացների, ուսուցողական սեմինարների, դասագրքերի տպագրության ծառայությունների ձեռքբերում՝ 80,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 4) AYOlingo հայերենի ուսուցման բջջային հավելվածի թարմացման, ընդլայնման, նաև նշված հավելվածի ամսական տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 123,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

		5) հանրային տարածքների և հաստատությունների բարեկարգման աշխատանքների իրականացման համար շինարարական նյութերի ձեռքբերում՝ 90,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 6) ֆինանսական հաշվառման, աուդիտորական և իրավաբանական խորհրդատվության ծառայությունների ձեռքբերում՝ 62,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 7) կազմակերպության վեր կայքի սպասարկման, սերվերային, համակարգչային և ցանցային համակարգերի, ինչպես նաև համատեղակայման ծառայությունների ձեռքբերում՝ 45,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 8) տեսահոլովակների և գովազդային նյութերի պատրաստման ծառայությունների ձեռքբերում՝ 29,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 9) համակարգչային սարքերի ձեռքբերում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 10) տնտեսական և գրասենյակային ապրանքների ձեռքբերում՝ 35,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 11) գրասենյակների անվտանգության պահպանման ծառայությունների ձեռքբերում՝ 25,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 12) կոմունալ ծառայությունների ձեռքբերում՝ 19,500,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) կազմակերպության վեր կայքի սպասարկման, սերվերային, համակարգչային և ցանցային համակարգերի, և համատեղակայման ծառայություններ՝ 45,000,000 դրամ. 2) տեսահոլովակների և գովազդային նյութերի պատրաստում՝ 29,000,000 դրամ. 3) տնտեսական և գրասենյակային ապրանքներ՝ 35,000,000 դրամ. 4) գրասենյակների անվտանգության պահպանման ծախսեր՝ 25,000,000 դրամ. 5) կոմունալ ծախսեր՝ 19,500,000 դրամ. 6) ֆինանսական հաշվառման, աուդիտորական և իրավաբանական խորհրդատվական ծառայություններ՝ 62,500,000 դրամ:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպությունների, Գյումրու և Վանաձորի համայնքապետարանների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ամսական զեկուցում և հաշվետվություններ Հովնանյան հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ